

## ՄԱՐԻ ՄԻՐՈՒՆ

Գուսան Աշոտ

Հազար նագով, եար, հովերի հետ եկ,  
Ծաղիկ փնջելով՝ սարուրի հետ եկ,  
Մեւ ձիուս վրայ ձեր գիւղն եմ եկել,  
Դուռդ փակ տեսել, մուրդ մնացել:

Սարի սիրուն եար, սարի մեխակ բեր,  
Ա՛խ, չէ ի՞նչ մեխակ, սիրոյ կրակ բեր:

Հազար մի ծաղկի մէջ ես մեծացել,  
Ծաղկանց ցողերով մազերդ թացել,  
Մազերիդ բոյրը հեռից է գալիս,  
Զեփիւռ բերում սրտիս է տալիս:

Սարի սիրուն եար, սարի մեխակ բեր,  
Ա՛խ, չէ ի՞նչ մեխակ, սիրոյ կրակ բեր:

Երբ քո հայեացքը երկնին ես յառում,  
Վառ աստղերն ասես նոր լոյս են առնում,  
Քո ձայնն են առնում հավք ու հովերը,  
Ա՛խ, ե՞րբ կ'առնեմ ես քո մատաղ սէրը:

Սարի սիրուն եար, սարի մեխակ բեր,  
Ա՛խ, չէ ի՞նչ մեխակ, սիրոյ կրակ բեր:

Սարից է գալիս ես առուի ջուրը,  
Բերում է, եար, քո բոյրն ու համբոյրը,  
Աշոտ, թէ կարաս քո երգ ու հանգով  
Եարիդ կախարդի, թող տուն գայ հանդով:

Սարի սիրուն եար, սարի մեխակ բեր,  
Ա՛խ, չէ ի՞նչ մեխակ, սիրոյ կրակ բեր: